

ՍԱՂՄՈՍ 61

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծո պաշտպանության վրա վստահություն	Աստծո հավիտենական պաշտպանության երաշխիք	Պաշտպանության աղոթք	Պաշտպանության աղոթք	Գերեվարվածի աղոթք
<u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին, նեզինալթի վրա, Դավթի սաղմոսը				
61:1-4	61:1-2 61:3-7	61:1-2 61:3-5	61:1-2 61:3 61:4-5	61:1-2 61:3-5
61:5-8		61:6-7 61:8	61:6-7 61:8	61:6-7 61:8

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սա ըստ երևույթին պալատական Սաղմոս է (տես՝ Սաղմ. 61:6): Այն, թե ինչպես է Աստված վարվում Թագավորի հետ, ցույց է տալիս, թե ինչպես է Նա վարվում ազգի հետ (տես՝ Սաղմ. 61:5):

Բ. Նախ, Սաղմ. 61:2 կարծես թե ակնարկում է գերություն, սակայն Սաղմոսի մյուս մասը չի պաշտպանում այս կարծիքը: Հետևաբար, Սաղմ. 61:2ա պետք է որ լինի փոխաբերական՝ Թագավորի կողմից մեկուսացման, օտարացման զգացողության վերաբերյալ:

Գ. Այս Սաղմոսը ունի մի քանի հիշարժան նկարագրություններ Աստծո մասին:

1. Վեմ, որն ավելի բարձր է, քանի ես
2. Դու իմ ապաստարան ես եղել
3. Դու իմ զորության աշտարակն ես
4. Թող որ Քո վրանի մեջ հավիտյան բնակվեմ
5. Թող որ Քո թևերի ծածկոցի տակ պատսպարվեմ

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 61:1-4

¹Լսի՛ր իմ աղաղակը, ո՛վ Աստված,

Ուշադրություն՝ ն դարձրում իմ աղոթքին:

²Երկրի ծայրից Քեզ եմ կանչելու, երբ սիրտս ընկճված է.

Առաջնորդի՛ր ինձ դեպի այն Վեմը, որ ինձնից բարձր է:

³Քանի որ Դու ինձ ապաստան եղար,

Մի ամուր աշտարակ՝ թշնամու դեմ:

⁴Ես Քո խորանի մեջ եմ բնակվելու հավիտյան .

Քո թևերի ծածկույթի մեջ եմ պատսպարվելու: Մեյա:

61:1 Երկու գուգահեռ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔՆԵՐ են սկսում այս Սաղմոսը (տես՝ Սաղմ. 86:6, Ես. 28:23, 49:1, 51:4, Երեմ. 18:19, Դան. 9:19, Ովս. 5:1):

1. լսի՛ր իմ աղաղակը – BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. ուշադրություն դարձրում իմ աղոթքին – BDB 904, KB 1151, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Սաղմ. 61:2-ում սաղմոսերգուն ասում է, «Երկրի ծայրից եմ Քեզ կանչելու»: Սա հնչում է կարծես գերեվարված մարդու աղոթք, սակայն Սաղմոսի մնացած մասը չի պաշտպանում այս կարծիքը: Հետևաբար, պետք է որ սա լինի իր համար օտարության զգացողության նկարագրություն:

«Երկիր» բառը այս համատեքստում կարելի է հասկանալ որպես «տարածաշրջան» (այսինքն՝ «Խոստացված Երկիր»), տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՐ, ՀՈՂ, ԵՐԿՐԱԳՈՒՆԴ: Բառերը ունեն նշանակություն միայն համատեքստում:

Ab տարբերակը այս արտահայտությունը վերագրում է *Շեղիմ* (էջ՝ 84): Սա հիմնված է Ուգարտական համագործերի վրա: Եթե այդպես է, ուրեմն սաղմոսերգուն առերեսվել էր մահվան հետ, և ոչ թե պարզապես հուսահատության:

❖ «աղաղակ» «Աղաղակ» (BDB 943) կարող է նկատի ունենալ ցնծության ձայները, ինչպես այստեղ, օգնության և պաշտպանության աղաղակը (տես՝ Սաղմ. 17:1, 88:2, 106:44, 119:169, 142:6):

61:2 «այն վեմը, որ ինձնից բարձր է» «Վեմ» անունը արտացոլում է երկու երբայերեն արմատ (BDB 849 և 700 I): Այս անունը (BDB 849) առաջին անգամ հանդիպում է 2 Օրինաց 32:4, 15, 18, 30, 31-ում: Նկատել, թե ինչպես է այն արտահայտվում:

1. Վեմը – 2 Օրինաց 32:4, 15, 18, 30, 31

2. նրա փրկության Վեմը – 2 Օրինաց 32:15, 2 Թագ. 22:47, Սաղմ. 89:26, 95:1

3. Վեմը, որ քեզ ծնեց – 2 Օրինաց 32:18

4. նրանց Վեմը ծախեց նրանց – 2 Օրինաց 32:30

5. նրանց վեմը նման չէ մեր Վեմին – 2 Օրինաց 32:31

6. մեր Աստծո պես Վեմ չկա – 1 Թագ. 2:2

7. ՅԱՀՎԵՆ իմ Վեմն է և իմ ամբողջ և իմ Փրկիչը – Սաղմ. 18:2, 31:3, 71:3, 94:22

8. Իմ Աստված, իմ Վեմ, որին հուսացել եմ - Սաղմ . 18:2, 28:1, Եսայի 17:10
9. ո՞վ է վեմ, մեր Աստծուց բացի – Սաղմ . 18:31
10. ՅԱՀՎԵՆ ապրում է, և օրհնյալ է իմ Վեմը – Սաղմ . 18:46
11. իմ վեմ և իմ փրկիչ – Սաղմ . 19:14
12. իմ վեմ (BDB 700 I) – Սաղմ . 42:9
13. իմ վեմ և ոչ մի անարդարություն չկա Նրանում – Սաղմ . 144:1
14. Օրհնյալ է ՅԱՀՎԵՆ, իմ Վեմը – Սաղմ . 144:1
15. ՅԱՀՎԵՆ հավիտենական Վեմը – Եսայի 26:4
16. ՅԱՀՎԵԻ սարը՝ Իսրայելի Վեմը – Եսայի 30:29
17. կա՞ ուրիշ մի Վեմ – Եսայի 44:8

BDB 700 I հանդիպում է միայն Սաղմ . 18:2, 42:9-ում: Բառացիորեն այն նշանակում է «քարքարոս ժայռ», սակայն BDB 849-ի հոմանիշն է (երկուսն էլ օգտագործվում են Սաղմ . 18:2-ում):

Այս նկարագրությունն ունի մի քանի հավանական սկզբնաղբյուր:

1. սարերի ստորոտները կամ լանջերը կապված են ստեղծագործության հետ
2. Իսրայելին ՅԱՀՎԵԻ կողմից օրենքը տալու տեսարանը
3. Մորիա լեռան վրա տանարը
4. Ֆիզիկական սարերի ուժը և հաստատությունը
5. սարերը ամենաբարձր կետերն են, ամենամոտը երկնքին, որտեղ Աստված է բնակվում

❖ «**ինձնից բարձր է**» Սա կարող է մի քանի բան նշանակել:

1. վեմը, որ փրկություն և ապաստան է ապահովում, որը սաղմոսերգուն ինքը չի կարող ապահովել
2. վեմը, որն ինքը չի կարող մագլցել կամ հավանաբար հասկանալ (այսինքն՝ Աստծո հավերժությունը)
3. Աստծո մեծարված բնակավայրի և սաղմոսերգուի հուսահատության բնակավայրի միջև հակադրությունը (այսինքն՝ երբ իմ սիրտը նվաղում է):

LXX և Peshitta թարգմանությունները տալիս են՝ «Դու թողեցիր ինձ վեմի վրա»:

61:3 Սաղմոս 61:4 ունի երկու ԸՂՁԱԿԱՆ ԲԱՅ:

1. ապաստան կապված վահանի հետ 2 Թ-ազ . 22:31-ում, Սաղմ . 18:30, Առակ . 30:5
2. ապաստան կապված ամբոցի հետ Սաղմ . 59:16-ում
3. այստեղ ապաստվան կապված «գորության աշտարակի» հետ (տես՝ Առակ . 18:10) Սաղմ . 62:7-ում, «իմ գորության վեմը»:

61:4 Սաղմ . 61:4 ունի երկու ԸՂՁԱԿԱՆ ԲԱՅ

1. Թող որ բնակվեմ Քո խորանում – BDB 157, KB 184, *Qal* ԸՂՁԱԿԱՆ, տես՝ Սաղմ . 27:5, 31:20, 32:7
2. Քո թևերի ծածկույթի տակ եմ պատսպարվելու – BDB 340, KB 337, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇՈՒՔԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ):

Ինչպես որ Սաղմ . 61:3 ունի ռազմական նկարագրություն, 61:4 ունի տանարի, իսկ Սաղմ . 61:2-ը՝ հավանաբար «վեմի» հետ կապված նկարագրություն: Սաղմ . 61:4-ի նկարագրությունը նաև գտնվում է Սաղմ . 23:6, 27:4-ում:

«Հավիտյան» տերմինը ՀՈԳՆԱԿԻ է, որը շեշտադրում է ամբողջ միտքը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('OLAM)): Ես կարծում եմ, որ այս ՀԿ-յան Իմաստասիրական Գրականության համատեքստում այն արտահայտում է ուրախ, երկար կյանք՝ տանարի միջավայրում (այսինքն՝ խորանի) ՅԱՀՎԵԻ հետ (տես՝ Սաղմ . 23:6):

❖ «**Քո թևերի ծածկույթի տակ**» Սա Աստծո իզական նկարագրություններից է, որպես պաշտպանող մայր թռչուն (տես՝ Մատթ.23:37, Ղուկ.13:34): Տես՝ Սաղմ.17:8 և Հատուկ Թեմա. Շուրթ որպես պաշտպանության և հոգատարության փոխաբերություն:

❖ «**Սեյա**» Տես Սաղմ.3:2-ի գրառումը, Սամոսների Ներածություն, VII:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 61:5-8

**⁵Քանի որ Դու, ո՛վ Աստված, լսեցիր իմ ուխտերը,
Քո անունից վախեցողների ժառանգությունն ինձ տվիր:
⁶Դու երկարացնելու ես թագավորի կյանքը.
Նրա տարիները՝ սերնդե սերունդ:
⁷Նա հավիտյան Աստծո առջև է լինելու.
Օ՛, ողորմություն ու ճշմարտություն պատրաստիր,
Որ պահպանե նրան:
⁸Այսպես փառաբանություն եմ երգելու Քո անվանը հավիտյան,
Որպեսզի ամեն օր ուխտերս կատարեմ:**

61:5-8 Այս պարբերությունը կապված է Թագավորի հետ, որը ներկայացնում է ՅԱՀՎԵԻ ուխտի ժողովրդին:

1. Թագավորը ուխտեր է կատարել (այսինքն՝ հավատքի խոստում) ՅԱՀՎԵԻՆ
2. ՅԱՀՎԵՆ նրան/Իսրայելին տվել է Քանանի երկիրը (այսինքն՝ ժառանգություն, տես՝ Ծննդ. 15:12-21), նրանց, ովքեր վախենում են Իրենից:
3. ՅԱՀՎԵՆ երկարացնելու է Թագավորի կյանքը (նկատե՛ք արքայական չափազանցությունները):
4. Թագավորը գահակալելու է Աստծո առաջ հավիտյան (ըստ երևույթին «հավիտյանը» այստեղ հավերժը չէ, այլ երկար օրերը): Չգուշացե՛ք ՆԿ-յան կատարելագործված աստվածաբանությունը ընթերցել Եբրայերեն տեքստի մեջ (արքայական չափազանցությունները):
5. ՅԱՀՎԵՆ նշանակում է (BDB 584, KB 599, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, աղոթքի խնդրանք) բարեգթությանը և ճշմարտությանը (անձնավորված գործակալներ, տես՝ Սաղմ.40:11, 57:3, 89:14, «բարություն և ողորմություն», Սաղմ.23:6-ում, «լույս» և «ճշմարտություն»՝ Սաղմ.43:3-ում): Այս նույն հասկացությունը տրված է Առակ.20:28-ում: Թագավորին բարձրացնելը, Իսրայելին բարձրացնել է նշանակում:

61:5 NIDOTTE հատոր 2, էջ՝ 531, տալիս է մի գեղեցիկ մեկնաբանություն՝ «նրանք, ովքեր վախենում են Քո անունից»: Նրանք ներկայացնում են հավատարիմ հետևորդներին (տես՝ Սաղմ.15:4, 25:12, 14, 103:11, 13, 118:4): NIDOTTE ավելացնում է մի փոքր տարբերվող ձևերի ցանկ՝

1. նրանք, որ Քեզնից վախենում են – Սաղմ.31:19
2. Նրանք, որ վախենում են Նրանից – Սաղմ.34:7
3. նրանք, որ վախենում են Քո անունից – Սաղմ.61:5
4. նրանք, որ Աստծուց են վախենում – Սաղմ.66:16

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽ (ՀԿ)

61:8 Թագավորի և Իսրայելի հանդեպ Աստծո բարության շնորհիվ, Թագավորը փառաբանություններ է երգելու (BDB 274, KB 273, *Piel* ԸՂՁԱԿԱՆ) Նրան:

Դարձյալ, «հավիտյան» բառի կիրառությունը պետք է տեսնել որպես երկար, հաջողակ իշխանության փոխաբերություն: Թագավորի հավատքի խոստումները («երդումները») պատվում են, իրագործվում և կատարվում տաճարի մեջ: Այս փակման խոսքը նման է Սաղմ.30:12-ին, հետևաբար արտահայտում են մի շարք ծեսեր (այսինքն՝ գոհության պատարագ) կամ պատարագ (կապված գոհաբերության հետ, տես՝ Սաղմ.7:17):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք այս Սաղմոսը անհատական ողբ է, թե թագավորական:
2. Բացատրե՛ք «երկրի ծայրից» արտահայտությունը: Արդյո՞ք հեղինակը գերության մեջ էր:
3. Արդյո՞ք Սաղմ.61:4 ենթադրում է հավիտենական կյանք: (տես՝ Սաղմ.61:7) Մեսիական է արդյո՞ք այս Սաղմոսը:
4. Սահմանե՛ք «երդումը» այնպես, ինչպես կիրառված է այս Սաղմոսում (տես՝ Սաղմ.61:5,8):